

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԼԻՄՈՆՃԵԱՆ (ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԸ, 1768-1839)

Համբարձում Լիմոնճեանի անունը ներկայումս այնքան էլ յայնի չէ հանրութեանը. մասնագէտներից բացի այլք ընաւ տեղեակ չեն այն անգնահատելի ծառայութեան մասին, որ մատուցել է նա հայոց բազմադարեայ երաժշտական մշակոյթին<sup>1</sup>: Հ. Լիմոնճեանն ապրել եւ գործել է մօտաւորապէս երկու հարիւրամեակ առաջ կոստանդնուպոլում, որն այն ժամանակ հայկական երաժտութեան նշանակալից կենտրոններից մէկն էր, ինչպէս նաև բազմաթիւ այլ ազգերի մշակութային մի բազմերանգ ու աշխոյթ խառնարան: Իր աշխարհագրական դիրքով գտնուելով արեւմուտքի եւ արեւելքի խաչմերուկում, Կ. Պոլիսը, տաւաւել քան հայաշատ որեւէ այլ բնակավայր, ներառում էր արեւմտեան Հայաստանի տարրեր գաւառներում ստեղծուած երաժշտական հնամենի բանահիւսութիւնը, որին միախառնուում էր տեղի բազմազգ բնակչութեան երաժշտական խայտարդիտ ճաշակը, ինչպէս նաև արեւմուտքից հետզհետէ ներթափանցող եւրոպական մշակոյթի տարրերը: Լիմոնճեանի երաժշտական ազգանուէր գործունելութեան մասին ժամանակին գրել են հայ երաժշտութեան պատմութիւնն ուսումնասիրող շատ մասնագէտներ՝, սակայն այ-

<sup>1</sup>Տե՛ս Ա.ԲՓԻ ՎԱՐԴՈՒՄՆԵԱՆ, նոր հայկական ձայնագրութեան համակարգը ՀՀԳԱԱ. Հնագիւսութեան եւ ազգագրութեան ինսաֆրուտ, Հայ ժողովրդական մշակոյթ, Ա. Զեկոյցների թէզիաներ, Երևան 2001, էջ 104-105: նաև՝ Ա. Դ. Վարդուն, Новая армянская система безлинейной нотописи, РАН МАЭ. Лавровские (Среднеазиатско-кавказские) чтения, 2000-2001 гг., Краткое содержание докладов, стр.139-140.

<sup>2</sup>Եղիս. ՏՆՏԵԱՆՆ, նկարագիր կրգոց Հայաստեայց, Կ. Պոլիս, 1864; ԿՈՄԻՏԱՆ, Հայոց եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում, (անաւարտ), Արարտ, 1897; Կ.Ս. Կաշիար, Вопросы истории и теории армянской монодимической музыки, Ленинград, 1958; Հ. ԴԵՒՄՈՒՄ ՏԱՅԵԱՆ, Հայ Արդի ձայնագրութիւնը եւ Հ. Մինաս Թժշկեան, Գեղունի, Վենետիկ, 1927, էջ 58-63; Ա.Լ. ՇԱՀՆԱՅԻՐԵԱՆ, Հայ երաժշտութեան պատմութեան ակ-

սուհանդերձ նրա ամունը ղերեւս դուրս չի եկել մասնագիտական անձուկ շրջանակից:

Համբարձում Լիմոնճեանը (պապա կամ բարա Համբարձումը)<sup>3</sup> ծնուել է 1768-ին Կոստանդնուպոլիսի Բերա թաղամասում՝ իշարքերդից գաղթած հոռմէաղաւան չքաւոր ընտանիքում։ Ծնողները, միջոցներ չունենալով իրենց որդուն կանոնաւոր կրթութեան տալու, դերձակի մօտ աշակերտ են կարգում նրան, սակայն դեռահաս պատասնու բնածին հակումներն այնքան տարրեր էին իրեն պարտադրուած արհեստից, որ նա երբեք առիթը բաց չէր թողնում՝ յագուրդ տալու իր նախասիրութիւններին։ Դեռևս մանկուց, երաժշտական արտակարգ լսողութեան եւ բացառիկ յիշողութեան չնորհիւ, նա անգիր էր արել կ. Պոլսի եկեղեցիներում լսած բազմաթիւ շարականներ ու հոգեւոր այլ երգեր։ Տեսնելով իրենց որդու անհուն սէրը հոգեւոր երգեցողութեան հանդէպ, պատանի Համբարձումի ծնողները գաղարեցին ընդդիմանալ նրա երաժշտական հակումներին։ Տեղեկութիւններ կան, որ Լիմոնճեանի երաժշտութեան ուսուցիչը եղել է իր ժամանակի հմուտ շարականագէտ Զէննէ-Պօղոս վարժապէտը, որը Պոլսոյ հայոց պատրիարք, հանրայայտ Ներսէս Վարժապէտեանի պապն էր եւ այնքան անուանի վարժապէտ, որ իր սերունդները հետագայում ժառանգեցին վերոնշեալ ազգանունը։ Հայկական երգեցողութիւնից բացի, վերջինս նաև յունական եկեղեցական երգեցողութեան ու յունարէնի գիտակ էր<sup>4</sup>, եւ նոյնիսկ տեղի յոյներին էր ուսուցանում իրենց իսկ եկեղեցական եղանակներն ու ձայնագրութիւնը։ Նշելի է, որ Զէննէ-Պօղոսը, «ըստ աւանդութեան, կիրակամտի Լոյս-զուարք երգի նդանակը Յունականին վրայ բարեփոխելով, արդի նդանակը վերակազմած եւ ձայ-

նարկներ, Երեւան, 1959; Ռ. Ա. ԱԹ.ԱՅԵԱՆ, Հայկական խագային նոտագրութիւններ, Երեւան, 1959; Մ. ՄՈՒՐՍ.ԴԵՍՆ, Հայկական երաժշտական մշակոյքի պատմութիւն, Երեւան, 1970; Հ. Տագմիզյան, Գործութեան, կիրակամտի Լոյս-զուարք երգի նդանակը Յունականին վրայ բարեփոխելով, արդի նդանակը վերակազմած եւ ձայ-

<sup>3</sup> Հ. ԵԴԻՒԱՐԴ ՀԻՒՄԻՒԴԵԱՆ. Տիրացու Համբարձում, Բազմագէպ, 1873, պը-րակ Ա, էջ 52-54; ԱՐԻՍՏԱԿԻՍ ՔՀՆՅ. ՀԻՍՍՐԵԱՆ, Պատմութիւն Հայ հայնագրութեան եւ կենսագրութիւններ երաժիշտ ազգայնց, 4. Պոլիս, 1914, էջ 7-20, 29-30, 55-60; ՌՈՒԲԻՆ ԱԲԵՂԱՅ. Բարա Համբարձում Լիմոնճեան եւ հայ նոտագրութեան ծագումը, Էջմիածին, 1915:

<sup>4</sup> ՏԵ՛Ա ԱԲՐԱՀԱՄ Յ. ԱՅՎԱՋԵԱՆ. Շար հայ կենսագրութեանց, 4. Պոլիս, 1893, էջ 113-123.

նախօսած է»<sup>5</sup>: Իր հմուտ ուսուցչից կարճ ժամանակում իւրացնելով յունական հոգեւոր երգեցողութիւնը, Լիմոնճեանն սկսում է հետաքրքրուել նաեւ երոպական երաժշտութեան սկզբունքներով ու նոտագրութեամբ: Երիտասարդ Համբարձումի երաժշտական ձիրքերն այնքան ակնյայտ էին, որ շուտով նա գրաւում է Պոլսի հայ մեծահարուսա ամիրաներից ոմանց ուշաղրութիւնը: Խօսքը յատկապէս Տիւզեան գերդաստանի մասին է, որի ներկայացուցիչներից մի քանիսը նաեւ սիրող (amateur) երաժիշտներ էին ու արուեստի յայտնի հովանաւորներ: Ցովհաննէս, Անտոն Էւ Յակոր Զէլչպիները ըաւականին լաւ տիրապետում էին երոպական ու արեւելեան տարրեր գործիքների եւ յաճախ սիրողական ուշագրաւ համերգներ էին կազմակերպում: Նրանց ծովեզրեայ հոյակերտ պալատը կարելի էր համեմատել երաժշտական մի ինքնատիպ կաճառի հետ, որտեղ յաճախ կայանում էին յիշարժան ներկայացումներ եւ համերգներ: Ցայտնի է, որ Կոստանդնուպոլիսի հայկական թատերական առաջին ներկայացումները բեմադրուել են Հէնց Տիւզեանների այս չքեղ ապարանքում՝, ուր շուտով ոչ միայն հիւրընկալելում, այլեւ Զէլչպիների բարձր հովանաւորութեան չնորչիւ բնակութիւն է հաստատում տաղանդաշատ Համբարձում Լիմոնճեանը, պատեհութիւն ստանալով ազատօրէն զբաղուել իր նախընտրած գործով: Նա սիրում էր յաճախել Պոլսի բազմաթիւ եկեղեցիները, ունկնդրելով ամէնօրեայ ժամերգութիւնը, կիրակնօրեայ պատարագն ու տաղաւար տօների արարողութիւնները՝ հնարաւորինս հարստացնելով հայկական միջնադարեան հոգեւոր երգեցողութեան վերաբերեալ իր ամբարած գիտելիքները: Բայց այդ, նա ժամանակ էր գտնում ունկնդրել նաեւ այլազգիների՝ յոյների, թուրքերի, արաբների, հրեաների, ասորիների, գնչուների, ինչպէս նաեւ պտտուող դերուիչների ինքնատիպ երաժշտական կատարումները: Հարկ է նշել, որ ԺԹ. դարի սկզբներին Պոլսի հայկական եկեղեցիների երգեցողու-

<sup>5</sup> Անդ, էջ 122: (գծուար է սառյա մեկնաբանել, թէ սրանով յատկապէս ինչ ուղղում առել արգոյ հեղինակը, սակայն ըստ ամենայնի Զէննէ Պողոսը մանկուց աչքի է ընկել գեղեցիկ ձախով եւ երգելու ձիրքով, ինչի չնորչիւ էլ սատցել է իր մականունը, որի հայերէն խմասն է՝ իդական, տե՛ս անդ, էջ 20):

<sup>6</sup> Այդ թւում եւ վենեսիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Մինաս Բժշկեանի հիմասած զպրոցական թատրոնի ներկայացումները, ով 1908-ից գործուղուած էր Պոլսի՝ տեղի մասնաճիւղի զպրոցում դասաւանդելու: (այս մասին տե՛ս Գ. ՍՏԵՓԱՆԵՍԱՆ, Ռերուագիծ արեւմտահայ բատրոնի պատմութեան, է.1, էջ 116-117):

թիւնը որոշ չափով կրում էր յունական ոնդային երգեցողութեան ազգեցութիւնը, իսկ քաղաքային երաժշտութիւնը՝ մերձարեւեան մուղամների: Որոշ տգէտ տիրացուներ, տուրք աշլով հասարակ խաւի անճաշակութեանը, նոյնիսկ հոգեւոր երգեցողութեան մէջ աւելի եւ աւելի յաճախ էին ներմուծում հայեցի մտածողութեանն անյարիր օտարամուտ տարրեր:

Սա նշանակում է, որ այդ ժամանակաշրջանում հայոց հոգեւոր երգեցողութիւնը, ինչպէս նաև ընդհանրապէս հայկական երաժշտական մտածողութիւնը, խաթարման լուրջ վտանգի առջեւ էր: Ինչպէս յայտնի է, 1453-ից՝ Կոստանդնուպոլսի անկումից ի վեր, պարբերաբար տեղի ունեցող մահմենդական տարրեր ցեղերի բազում ասպատակութիւնների պատճառով, հայշխարհում եւ նոյնիսկ գաղթօջախներում չափազանց անբարենպաստ իրավիճակ էր առաջացել, ինչը հայ ժողովուրդին տեւականօրէն զրկել էր բնականոն զարգացման հասրաւորութիւնից, իսկ հայոց զարգացած երաժշտական մշակոյթը հասցըել անդառնալի կորուստների սահմանին: Դրանցից ամենամեծն ու ցաւալին մեր միջնադարեան խազանշանների բանալու կորուստն էր, որի տիտուր հետեւանքները մինչեւ այժմ էլ գգալի են հայկական երաժշտութեան անդաստանում: Ուշ միջնադարում, երբ աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդներն արգէն թեւակոփում էին զարգացման նոր՝ առաւել բարձր փուլ, հայ ժողովուրդը մի քանի հարիւրամեակի ընթացքում պայքարում էր սոսկ գոյատեւման համար, այդ պատճառով էլ մեր ուսումնասէր ազգը յայտնուել էր զրեթէ համատարած անդրագիտութեան շեմին: Արեւմտեան Հայաստանի գաւառներում նոյնիսկ հոգեւորականներից ոմանք հազիւ կիսագրագէտ էին, իսկ խազանշանների արուեստն այնքան նուրբ էր եւ ծածուկ, որ անհնար էր չկորցնել զա այսպիսի զժողակ պայմաններում:

Սակայն հայ ժողովրդին հնարաւոր չէր ի սպառ զրկել մշակոյթից ու յատկապէս երաժշտութիւնից. երկարատեւ մաքառումների ընթացքում մեր ժողովրդի հետ յարատեւեց նաև նրա երգը: Հայաշատ գաղթօջախների համեմատարար խաղաղ քայլերում աստիճանաբար վերընձիւրութեցին վանական մի շարք միաբանութիւններ, ուր հետզհետէ սկիզբ առաւ վերանորոգութեան համընդհանուր շարժումը: Մշակոյթի ասպարէզում ամենամեծ խթանը դարձաւ տպագրութեան ծնունդն ու հիմնումը նախ վենետիկում, այնուհետեւ Կ. Պոլոմում, Հռոմում, իջմիածնում ու Նոր Ջուղայում կարճատեւ առկայծումներից յետոյ, Ժի. դարի

կէսերից այն տեւականօրէն հանգրուանում է Ամստերդամում։ Հէնց այստեղ է, որ երջանկայիշատակ Ռևկան վարդապէտը, հայերէն Աստուածաշնչի առաջին տպագրութիւնից անմիջապէս յետով, իրականացրեց խազաւոր Շարակնոցի եւ խազաւոր Ժամագրքի առաջին տպագրութիւնները։ Իրաւամբ հարց է ծագում։ Եթէ խազերի բանալին կորստեան էր մատենուել, ապա ինչ իմաստ ունէր վերոնշեալ մատեանները մեծ դժուարութեամբ արպագրել խազանշաններով հանգերձ։ Զէ որ գրանց նայելով այլեւս հնարաւոր չէր երգել վերը նշուած մատեաններում ամփոփուած շարականներն ու երգերը։ Այս հարցի պատասխանը միանշանկ չէ։ Կարելի է ենթագրել, որ այն ժամանակ գեռեւս գոյութիւն ունէին հոգեւոր երաժշտութեան փոքրաթիւ գիտակներ, որոնք մանկուց եկեղեցի յաճախելով, ինչպէս նաեւ զպրաց դասում երգելով, իրենց ամբարած երաժշտական գիտելիքների եւ երկար տարիների փորձառութեան չնորհիւ դեռեւս կարողանում էին երգել խազագրուած մատեաններում ամփոփուած շարականներն ու նոյնիսկ ծանր՝ Մտեղի կոչուող ճոխ եւ զարդորուն տաղերն ու մեղեղինները։ Քանի որ խազերը նշում էին ոչ թէ առանձին երաժշտական հնչիւններ՝ որոշակի բարձրութեամբ ու տեսողութեամբ, այլ լոկ ուրուագծում մեղեղու մօտաւոր եկեւէջները, ապա դրանցով երգելու համար անհրաժեշտ էր նախապէս հասու լինել երգողական արուեստի հիմունքներին՝ ի մասի ունենալով որոշակի ծայնեղանակներում ընթացող մեղեղինների աւանդական երգուածքները<sup>7</sup>, բացի այդ, երգչից ակնկալում էր նաեւ յանկարծաբաններու որոշ ձիրք ունենալ, ինչն էլ թոյլ կը տար միեւնոյն երգի իւրաքանչիւր կատարում դարձնել իւրովի բացառիկ։ Համբարձում Լիմոննեանը հէնց այդպիսի բազմազան ունակութիւններով լիուլի օժտուած երաժիշտ էր, սակայն նրա օրօք խազանշաններն արդէն ի սպառ կորցրել էին իրենց կիրառական նշանակութիւնը։ Մնացել էր լոկ բանաւոր աւանդոյթը, ինչն էլ հետզհետէ խաթարւում էր այլադաւան շրջապատի կործանարար ազդեցութիւններից։ Որքան էլ հասուլինտ ուսեալ հոգեւոր հայրերը ձգտէին հնարաւորինս գերծ պահել աղաւաղումից գոնէ եկեղեցական երգեցողութիւնը, բազմա-

<sup>7</sup> Ա. ԹԱՀՄԻԶՅԱՆ, Ռևկան վարդապէտն ու խազագրութեամ արուեստը, էջմիածին, 1966, N1-2, էջ 159.

<sup>8</sup> Քանի որ եկեղեցական ութ ծայնեղանակների լուսանցքային համառատպարութիւնները նոյնպէս խազանշանների գեր էին կատարում, ծառայիրակ որպէս իւրօրինակ բանալի խազեր։

թիւ տգէտ տիրացուներ, ըստ իրենց քմահաճոյքի, օրէցօր խեղաթիւրում էին Հայոց տոհմիկ երգերը արեւելեան անյարիր պահումանքներով, երբեմն գրեթէ անճանաչելի դարձնելով նոյնիսկ ամենայայտնի երգերի մեղեղիները։ Այս էր պատճառը, որ Պոլսի տարբեր եկեղեցիներում յաճախ միեւնոյն երգը բոլորովին այլ ելեւէջով էր կատարում, եւ նոյնիսկ Մայր Տաճարում միշտ չէր, որ կարելի էր լսել ներդաշնակ ու բնիկ Հայեցի երգեցողութիւն։

Վերը նշուած կամարականութիւնների դէմ պայքարելու միակ միջոցը նախնիներից ժառանգած հոգեւոր երգեցողութեան բարձրարուեստ գանձերը շուտափոյթ կերպով ճշգրտօրէն թղթին յանձնելն էր։ Հայ իրականութեան մէջ առաջին անգամ սոյն միտքը լրացել էր Գրիգոր Պափիր Գապասաքալեանը, որը գեռեւս Ժ. գարի վերջերին առաջարկել էր ստեղծել ճայնագրութեան նոր համակարգ, օգտագործելով նաեւ բիւզանդական ու մերձարեւելեան երաժշտական զանազան նշանների տարրերը։ Գրտակցելով խազագրութեան արուեստի ճգնաժամային վիճակը, իր աշխատութիւններում նա առաջին անգամ փորձել էր ելք գտնել դրանից, համազրելով Հայոց խազերի եւ բիւզանդական նեւմագրութեան սկզբունքները։ Իր մի քանի տպագիր եւ անտիպ երկերով<sup>9</sup> Գ. Գապասաքալեանը դարձաւ Հայոց խազագիտութեան հիմնադիրը, սակայն ճայնագրութեան նոր համակարգ ստեղծելու նրա ջանքերն արդակս էլ գործնական արդիւնք չտուեցին։ Այսուհանգերձ, ապրելով եւ գործելով Կ. Պոլսում, վերջինս շուտով մէծ ճանաչում ձեռք բերեց երաժշտական շրջանակում, իսկ նրա ուշագրաւ մտայլացումները հաւանաբար ոգեւորեցին ու խթանէցին Համբարձում Լիմոնճեանին՝ ստեղծելու ճայնագրութեան առաւել կատարեալ մի համակարգ, որի միջոցով հնարաւոր կը լինէր ճշգրիտ կերպով գրի առնել եւ նոյն կերպ էլ վերարտադրել ինչպէս Հայոց, այնպէս էլ Հարեւան բազմաթիւ ազգերի երաժշտական ժառանգութիւնը։ Այսուեղ անշուշտ հարց է ծագում, թէ Հայոց հոգեւոր երգեցողութեան նմոյնները ինչու չէր կարելի պարզապէս ճայնագրել եւրոպական նոտագրութեամբ։

<sup>9</sup> Տե՛ս Գրիգոր ԴՊԵՐ ԳԱՊԱՍԱՔԱԼԵԱՆ, Գրեյլ որ կոչի նուագարան, Կ. Պոլս, 1794, Գիրք երաժշտական, Կ. Պոլս, 1803, որին կից՝ նուագարան երաժշտական եւ Գրեյլս կոչեցեալ երգարան, 1803; նաեւ՝ Ն. Թահմրգեան, Գրիգոր Գապասաքալեանի համառօտուքիւն երաժշտականի գիտութեան անտիպ աշխատուքիւնը, Բանքեր Մատենագրանի, 1974, N7, էջ 291; և Ռ. Ա. ԱՅԱՑԵԱՆ, Գրիգոր Գապասաքալեանը եւ խազարանուքիւնը, ԲՄ, 1960, N5, էջ 165։

Հստ էութեան, դա ոչ այնքան անհնար էր, որքան մերձարեւելեան երաժշտական մտածողութեամբ տոգորուած այդ միջավայրում տիրում էր այն մտայնութիւնը, որ եւրոպական նոտաները սոսկ արեւմտեան բազմաձայն երաժշտութեան համար են ստեղծուած եւ սկզբունքօրէն կիրառելի չեն հայկական ձայնեղանակացին միաձայն երգեցողութեան նմոցները ձայնագրելու համար։ Հնգագծով օժտուած եւրոպական նոտագրութիւնը, ուր իւրաքանչիւր հնչիւն ունէր իր որոշակի բացարձակ բարձրութիւնն ու որոշակի տեսողութիւնը՝ տակտի գծերով հանդերձ, հայ հոգեւոր երգեցողութեան գրառման համար բոլորովին կիրառելի չէր թւում պոլսահայ երաժիշտներին։ Սակայն հետագայում՝ ի. գարի կէսերին, Գենետիկի Միիթարեան միաբանութեան անդամ Հայր Ղեւոնդ Տայեանը նոտագրեց եւ մի քանի ստուար հատորով լրյու ընծայեց Ձայնագրեալ Շարակնոցի վենետիկեան երգուածքները եւրոպական ձայնագրութեամբ<sup>10</sup>, յաւելելով վերջինիս ածանցման (ալտերացիայի) մի շարք ինքնահնար նշաններ, ուրոնք լրացնում էին գրա կիսատոներն առաւել փոքր ձայնամիջոցներով (ինտերվալ)<sup>11</sup> քառորդ տոններով<sup>12</sup>։ Սակայն սա տեղի ունեցաւ Լիմոննեանից գրեթէ մէկուկչս հարիւրամեակ անց միայն։ Իսկ մինչ այդ, արդէն քաջ ծանօթ լինելով եւրոպական ձայնագրութեան հիմունքներին, Լիմոննեանը երկու տարի շարունակ փորձել էր գրի առնել Ներսէս Շնորհալուց աւանդուած քաղցրալուր եղանակները<sup>12</sup>, վերջնականապէս համոզուելով, որ եւրոպական ձայնանիշները չեն բաւարարում մեր միջնադարեան երգեցո-

<sup>10</sup> Հ. Ղեւոնդ ՏԱՅԵԱՆ, Նկայշ հաւատացեալք, Ամոյշ մը հայ եկեղեցւոյ սրբազն երաժշտութեան, եւրոպական ձայնագրութեամբ, հանդերձ մասնագիտական ուսումնասիրութեամբ, Վենետիկ-Մ. Ղազար, 1933, նաև՝ Տարական Հայաստաննայց Եկեղեցւոյ, Ձայնագրեաց Հ. Ղեւոնդ Վ. Տայեան Միիթարեան (Հ. Բ-ր, յատկապէս Հ. Դ. Ազդ), Վենետիկ-Մ. Ղազար, 1954-1969, այսու Ձայնագրեալ Շարակնոց։

<sup>11</sup> Այս մասին անոն ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, Ուշ միջնադարեան հոգիւոր երաժշտութեան Վենետիկի դպրոցն ըստ Հայր Ղեւոնդ վրդ. Տայեանի Ձայնագրեալ Շարակնոցի, ՀՀԳԱԱՅ Արուեստի ինստիտուտ, Հայ արուեստին ուուիրուած հանրապետական ութերորդ գիտական կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1997թ., նաև՝ նոյն խորագրով յօդուածներ, Մաս Ա., Բագմավէս, Վենետիկ-Մ. Ղազար, 2005, էջ 379-393; նոյնի Մաս Բ., Բագմավէս, 2006, էջ 534-551; նաև՝ Բագմավէս, 2007, էջ 501-516։

<sup>12</sup> ԱՐ. ՔՀՆՅ. ՀԻՍԱՐԾԵԱՆ, Պատմութիւն Հայ ձայնագրութեան..., 1914, էջ 10-11։

դութեան իւրայտուկ նրբերանգները գրառելուն։ Խնդիրն այն էր, որ եթէ եւրոպական ձայնագրութիւնն առաջացել ու մշակուել էր հաւասարաշափ տեմպերացուած հնչիւնաշարի հիման վրայ, որ արեւմտեան բազմաձայնութեան երկարատեւ զարգացման արդիւնք էր, ապա հայկական միաձայն (մոնողիկ) երգեցողութեան հիմքում ընկած էր բնական հնչիւնաշարն իր ձայնեղանակային մտածողութեամբ, ուր առկայ էին նաեւ կիսատոնից փոքր ձայնամիջոցներ, որոնք եւ առաջացնում էին, եւրոպականի համեմատ ցած հնչիւններ։ Ահա թէ ինչու Լիմոնճեանն ու նրա հեղինակակից անձինք<sup>13</sup> վճռեցին ստեղծել ձայնագրութեան մի այնպիսի համակարգ, որը պէտք է լիովին համապատասխանէր հայկական երաժշտական մտածողութեանը, եւ որի միջոցով հասրաւոր լինէր գրառել նաեւ Պոլուում բնակուող այլազգինների երաժշտութիւնը։ Որպէս հարց միջնադարեան խաղանշանների հանդէպ իւրօրինակ յարդանքի տուրք, Լիմոնճեանն ու նրա համաշեղինակներն ընտրեցին այլ խագերից եօթը (փուշ, էկորճ, վերնախաղ, բենկորճ, խոսրովային, ներքնախաղ եւ պարոյի), համապատասխաննեցնելով սրանք եւրոպական հնչիւնաշարի եօթ հիմնական ձայնանիշերին, սակայն առանց հնգագծի եւ մի էական տարբերութեամբ։ Գրանցով նշանակուում էին հնչիւնների ոչ թէ բացարձակ, այլ յարաբերական բարձրութիւնները<sup>14</sup>։ Սկզբնական շրջանում վերոնշեալ ձայնաստիճաններից առաջինը պէտք է համապատասխանէր եւրոպական Re (d) հնչիւնին, սակայն քանի որ հայկական երաժշտութեան հիմքում ընկած արեւելեան հնչիւնաշարը (scala) իր աստիճանների բացարձակ բարձրու-

<sup>13</sup> Այս մասին տե՛ս՝ Ա.Թիֆի Դ. Վ.ԱՐԴՈՒՄԵՍՆ, Մինաս Բժշկեանը եւ հայկական նոր ձայնագրութեան ստեղծման հարցները, Պատմա-րանասիրական Հանդէս, 1981, N3, էջ 165-173; Հ. Ճ. Սիրունի, Պատմա Համբարձում, Լրաբեր, 1972, N10, էջ 77; Նաեւ՝ A.D. Vardumyan, Minas Bziskean et la Notation Musicale Arménienne Moderne, REArm N17, Paris, 1983, p. 565-577, 708; Աղջ. R. Atayan, Baba Hambarjum, p. 579-581; H. Siruni, Hambarjum Limoncean, p. 581-587. Նաեւ Ա. Դ. Վ.ԱՐԴՈՒՄԵՍՆ, Հ. Մինաս Բժշկեան, Երաժշտութիւն, որ է համառու տեսութիւն երաժշտական սկզբանց կլիւլութեանց հյանական անդամագրաց խաղից. 1815. աշխատասիրութեամբ Արամ Քերովբանի, Երեւան 1997, (գրախօսութիւն), ՊԲՀ, 1998, N1-2, էջ 267-270, ինչպէս նաեւ վերոնշեալ գրախօսուած գիրքը, այսու. Հ. Մինաս Բժշկեան, Երաժշտութիւն...:

<sup>14</sup> Սկզբնական շրջանում սրանց կցուած էին արեւելեան մաքամների համապատասխան անուանուամները, որոնք հետագայում վերացուեցին:

թիւներով զգալիօրէն տարրերւում է արեւմտեան հնչիւնաշարից<sup>15</sup>, ապա հետագայում, երկարատեւ զէների ու մասնագիտական քննարկումների արդիւնքում, Լիմոնճեանի սաների մեծամասնութիւնն ընդունեց փուշը հաւասար է ԾՕ (c) գրութիւնը<sup>16</sup>: Բանն այն է, որ ըստ Կոմիտասի<sup>17</sup>, փուշը հաւասար է Ռէ գրութեան դէպքում, չնայած վերնախաղ ձայնաստիճանը փոքրինչ բարձր է եւրոպական ֆ-ից (Fā), քանի որ d-f (Re-Fa) ձայնամիջոցը ոչ թէ մեծ եռեակ (terzia) է կազմում, այլ փոքր. ստացւում է, որ հնչասանդղակի (գամմա) հիմքում ընկած է ոչ թէ մեծալար (մաժոր), այլ փոքրալար եռահնչիւն, որը մինորալին ընոյթ է հաղորդում դրան: Չնայած այն հանգամանքին, որ լայն փոքր եռեակը (Re-Fa) եւ նեղ մեծ եռեակը (ԾՕ-Մի) գործնականում գրեթէ նոյն կերպ են հնչում, քանի որ էնհարմոնիկօրէն մօտաւորակչու հաւասար են միմնաց, Կոմիտասն իրաւացիօրէն գրանում էր, որ հայկական հիմնարար ձայնաշարը մաժոր ընոյթ ունի, եւ հէնց այդ պատճառով ինքն էլ ի վերջոյ ընդունեց փուշը հաւասար է ԾՕ հիմքով ձայնագրութեան համակարգը: Տեղին է նշել, որ փուշը հաւասար է Ռէ գրութեան կողմնակիցներն էին Հ. Լիմոնճեան - Ար. Յովհաննիսեան - Հ. Զերչեան - Հ. Արվագեան շարքի անդամները, որոնք աւանդապահ երաժիշտների հոսանքն էին կազմում, իսկ միւս՝ փուշը հաւասար է ԾՕ գրութեան ջատագովներն էին Հ. Լիմոնճեան - Ար. Յովհաննիսեան - Գ. Երանեան - Ն. Թաշճեան շարքի անդամները. Եղիա Տնտեսեանն այս երկու հոսանքների միջեւ իւրայսառուկ միջին տեղ էր գրանում<sup>18</sup>: Ինչ վերաբերում է Նոր հայկական ձայնագրութեան ածանցուած սատիճաններին, ապա դրանք արտայայտում էին կիսվեր (diese) կամ կիսվար (beimol) ցոյց տուող մի նշանով, որ դրւում էր տուեալ ձայնանիշից վեր եւ կիրառում ըստ անհրաժեշտութեան<sup>19</sup>: Տեւողութիւնը նոյնպէս այս համակարգում ար-

<sup>15</sup> Եղիա Մ. Տնտեսեան, Տարնք կրաժշտութեան, Խոթանագոլ, 1933, տես՝ ԹԱՂԴԱՍՍԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍՔԱԼԱՆԵՐՈՒ (նշեալ դրբին կից):

<sup>16</sup> ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶԵԱՆ, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարուեանի ուսումնասիրութեան հարցերը, ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ, 1, Երևան, 1969, էջ 168-178:

<sup>17</sup> Կոմիտաս, Հայոց եկեղեցական երաժշտութիւնը Ժթ դրում, Արարատ, 1897:

<sup>18</sup> ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶԵԱՆ, Կոմիտասը և ... , էջ 174-176:

<sup>19</sup> Հ. Լիմոնճեանի օրօք դա խունն նշանն էր, իսկ հետագայում այն փոխարինուեց փոքր երկար նշանով:

տայայտւում է Հիմնական ձայնանիշերից վեր դրուած կէտադրական ու առողանական մի քանի նշանով, իսկ առաւել մանր չափերը հետագյում լրացրել է Լիմոնճեանի աշակերտներից Ար. Յովհաննիսեանը: Այս, ինչպէս նաև գեղեղանքի, զարդարանքի եւ այլ բազմազան երաժշտական նշանների յարուցած տպագրական բարդութիւնների պատճառով էլ, ամենայն հաւանականութեամբ, մինչեւ 20-րդ դարի վերջը անտիպ էր մնացել Հ. Մինաս Բժշկեանի «երաժշտութիւն...» աշխատութիւնը, որ շարադրուել էր երկու օրինակով, 1913-ին՝ սեւագիր, իսկ 1915-ին՝ մաքրագիր:<sup>20</sup> Ի դէպ, տարօրինակ է, որ Արդի կամ Նոր Հայկական ձայնագրութեան համակարգի ստեղծման թուականը համարում է այդ երկի մաքրագիր օրինակի շարադրման տարեթիւը, սակայն դա տրամաբանական չէ, քանի որ աշխատութեանս սեւագիր օրինակից, այսինքն՝ 1913 թուականից էլ առաջ խնդրոյ առարկայ ձայնագրութեան համակարգը փաստօրէն պիտի որ ստեղծուած լինէր, քանի որ Հ. Մինաս Բժշկեանը դրանում մանրամասնօրէն շարադրել է արդէն գոյութիւն ունեցող ձայնագրութեան հիմունքներն ամբողջութեամբ: Հետեւարար, աւելի ճշտ կը լինի արձանագրել, որ Նոր Հայկական ձայնագրութեան համակարգը ստեղծուել է 1913 թուականին: Ինչեւէ, ամէն դէպքում, ձայնագրութեան այս համակարգի ստեղծուելուց յետոյ դեռևս մի քանի տասնամեակ պիտի անցնէր, որպէսզի կատարելագործուելով, հնարաւոր լինէր կիրառել այն իր կարեւորագոյն նշանակութեամբ, այսինքն՝ հայոց հոգեւոր մասնագիտացուած երգեցողութեան հազարաւոր նմոյշները ձայնագրելու համար:

Մինչ այդ, քանի որ Լիմոնճեանն իր նորահնար ձայնագրութեամբ անմիջապէս սկսեց գրառել եւ տեղնուատելը ճշգրիտ կերպով հնչեցնել նաև Հարեւան տարբեր ազգերի յայտնի երաժիշտների երկարաշունչ ստեղծագործութիւնները, դրանցից մի քանիսի հեղինակները լրջօրէն թշնամացան նրա հետ: Այն ընաւ դուր չեկաւ նեղմիտ վարպետներին, որոնք երաժշտական այդ կտորներից իւրաքանչիւրն ուսուցանելու պատրուակով ամիսներ շարունակ դասեր էին տալիս հարուստ ամիրաների շքեղ պալատներում, վայելելով նրանց հիւրընկարութիւնն ու հովանաւութիւնը: Իսկ Լիմոնճեանի ձայնագրութիւնն ի չիք էր դարձ-

<sup>20</sup>Տե՛ս Հ. Մինաս Բժշկեան՝ Երաժշտութիւն...1815, Երեւան 1997, էջ 3-5, նաև գրախօսութիւնն՝ Ս. Դ. ՎԱՐԴՈՒԽԵԱՆ, ՊԲՀ, 1998, N1-2, էջ 267-270:

նում՝ վերջիններիս սնակառութիւնը եւ բացառիկութեան հովերը, շարժելով նրանցից շատերի չար նախանձը:

Ի հարկէ բարեբախտարար բոլորը չէ, որ բացասարար էին վերաբերում Լիմոնճեանի այս գիւտին, օրինակ՝ ղէրութիչների այն ժամանակուայ Հոչակաւոր Շէջի Տէտէ Խամայիլն այնպիսի անկեղծ հիացմունքով էր վերաբերում Լիմոնճեանի ձայնագրութեան ընձեռած հրաշալի հնարաւորութիւններին, որ պատուիրել էր վերջինիս՝ ցանկացած պահին այցելել իրեն եւ ձայնագրել իր փափագած բոլոր եղանակները<sup>21</sup>:

Սակայն լնդամէնը մի քանի տարի անց՝ 1819-ին, Տիւզեանների գերդաստանին պատահած ձախորդութիւնների շարանով Լիմոնճեանը զրկուում է իր զօրաւոր պաշտպանների հովանաւորութիւնից եւ այլեւս չի կարողանում իրագործել իր ազգօգուտ գաղափարները, այլ թւում՝ հայկական եկեղեցական երգեցողութիւնից յունական ոնդային խորթ եւ անախորժ ոնի վերացումը: Նրա թշնամիներից մի քանիսը, այլեւս չկարողանալով հանդուրժել կարճ ժամանակում ձեռք բերած նրա համբաւը, համոզել էին մի քանի Ամիրանների, որ հայ եկեղեցուն անհրաժեշտ չէ Լիմոնճեանի ձայնագրութիւնը, քանի որ իրենք առանց այդ էլ Շարականի խազերով կարողանում էն «կարդալ Ներսէս Շնորհալիէ աւանդուած եղանակները»<sup>22</sup>: Չնայած այս ամէնին, Լիմոնճեանն իր խառնուածքով այնքան բարեսիրած անձնաւորութիւն էր, որ լոկ վշտանում էր իր ղէմ զործած անօրինական արարքներից, որոնց հետեւանքով ակամայ հարկադրուած եղաւ թողնել տարրեր եկեղեցիներում գասախօսելու իր առաքելութիւնը: Բազմազաւակ ընտանիքի հոգսերից զրդուած նա սկսեց կըրկին գրագրութեամբ զրագուել արքունի ճարտարապետ Պալեան Ամիրայի մօտ, որին հաճելի էր Լիմոնճեանի գեղագրական ձիրքն ու ժրաջան աշխատասիրութիւնը, ինչի չնորհիւ վերջինս հասցնում էր զուգահեռալրար առաջ տանել նաեւ իր արուեստի, այսինքն՝ ձայնագրութեան կատարելագործումը: Պալեան Ամիրան, չերմօրէն սիրելով եկեղեցական երաժշտութիւնը, ինչպէս նաեւ իրեն՝ Լիմոնճեանին, 1831-ին, երբ վերջինիս տունն ալրուեց բերայի հրդեհից, նրա համար կանգնեցրեց ութ սենեականոց փառաւոր մի բնակարան, «որպէս զի հանգիստ կարենայ բնակիլ

<sup>21</sup> Տե՛ս Ա. ՔՃՆՅ. ՀԻՍՍՐԵԱՆ, Պատմութիւն Հայ ձայնագրութեան..., 4. Պոլիս, 1914, էջ 11-13:

<sup>22</sup> Ասդ, էջ 14:

բազմարդիւն երաժիշտը՝ հանդերձ իսր ընտանեօք<sup>23</sup>: Այս յարդարժան ամիրան իր մահից առաջ հասցրեց ծանօթացնել Լիմոնճեանին Պէտքեան Ամիրայի հետ, որը նոյնպէս հասկանալով նրա գիւտի կարեւորութիւնը, Մայր Տաճարի ղպրաց զասապետ նշանակեց նրան, ինչը կրկին հնարաւորութիւն ընձեռեց զբաղուել իր նախընտրած գործով՝ ուսուցանել իր ձայնանիշերով հայկական շարականների աւանդական երգեցողութիւնը եւ վտարել հայոց եկեղեցուց օտարամուռ նորամուռութիւնները:

Համբարձում Լիմոնճեանը բազմաթիւ աշակերտներ ու հետեւրդներ ունեցաւ, որոնցից մի քանիսը հետագայում կարեւոր գործունէութիւն ծաւալնեցին հայ երաժշտական մշակոյթի զարգման ասպարէցում: Մրանցից յատկապէս յիշատակելի են Արիստակէս Յովհաննիսեանը, Գաբրիէլ Երանեանը, Նիկողայոս Թաշճեանն ու Եղիա Տնտեսեանը: Նշելի է, որ 1873-ին, երբ Գէորգ Դ. Մեծագործ կաթողիկոսը, Հայոց հոգեւոր երաժշտութեան մէջ միակերպութիւն եւ կանոնաւորութիւն մտցնելու նպատակով իմաստուն որոշում կայացրեց հրատարակել մեր եկեղեցական երգերի ժողովածուները, հեղինակաւոր ձայնագրագէտ փնտրելիս սկզբում գիմեց հէնց Ար. Յովհաննիսեանին, սակայն վերջինս, առաջացեալ տարիքի պատճառով ստիպուած լինելով հրաժարուել, առաջարկեց Նիկողայոս Թաշճեանին յանձնարարել այդ պատճառոր ու պատասխանատու գործը: Ամենայն Հայոց կաթողիկոսն ինքն էլ հմուտ շարականագէտ լինելով, ամէն կերպ սատարում էր Թաշճեանին՝ շուտափոյթ կերպով ձայնագրել եւ տպագրութեան յանձնել եկեղեցական երգեցողութեան հիմնարար ժողովածուները, վրկելով Հայոց Ռոկեդարից ի վեր արարուած հոգեւոր մանագիտացուած երաժշտութեան մեծարժէք գոհարները, սրբագրելով եւ փրկելով ղրանք հետազայ աղաւաղումից եւ կորստից: Այսպիսով, 1875-ին էջմիածնում լոյս տեսաւ նախ Զայնագրեալ Շարակնոցը<sup>24</sup>, ապա 1877-ին՝ Զայնագրեալ Ժամագիրքը<sup>25</sup>, իսկ 1878-ին՝ Զայնագրեալ Սուրբ Պատարագի երգեցու

<sup>23</sup> Անդ, էջ 15:

<sup>24</sup> Զայնագրեալ Շարական Հոգեւոր երգոց Սուրբ և ուղղափառ Առաքեական եկեղեցւոյ Հայաստանայց, աշխ. ՆիկողաՅոս ԹԱՇՃԵԱՆԻ, ի Վարդարշապատ, 1875:

<sup>25</sup> Երգել Զայնագրեալի ի Ժամագրոց Հայաստանայց Ս. Եկեղեցւոյ, Վարդարշապատ, 1877:

դութիւնը<sup>26</sup>: Մրան զուգահեռ, կ. Պոլսում Եղիա Տնտեսեանը, նոյնպէս գիտակցելով Նոր Հայկական ձայնագրութեան միջոցով շարականների աւանդական երգեցողութիւնը գրառելու կարեւորութիւնը, մի քանի տարի շարունակ ձայնագրում էր դրանց լաւագոյն երգուածքները: Հարցն այն է, որ Պոլսի եկեղեցիներում այնքան էին բազմացել հոգեւոր երգերի տարրերակները, որ անչափ գժուար էր ճիշտն ու սիմալը զանազանել՝ առանց տուրք տալու լայն սարածում գտած անճաշակ կատարումներին: Այդ էր պատճառը, որ կազմուեցին երաժշտական յանձնաժողովներ, որոնք բազմից քննելով շարականների տարրեր երգուածքները, ի վերջոյ գերապատուութիւնը տուեցին հչնց Տնտեսեանի իրագործած ձայնագրութիւններին, որոնք սակայն, սարաբախտ հանգամների բերումով անտիպ մնալով մինչեւ 1933 թուականը, տպագրուեցին սոսկ յետմահու՝ Տնտեսեանի որդու ջանքերով<sup>27</sup>: Միեւնոյն թուականին, կրկին շուրջ 60 տարի ուշացումով, լեւոն է. Տնտեսեանը լոյս ընծայեց իր անուանի հօր մի այլ անտիպ աշխատութիւնը՝ «տարերք երաժշտութեան», որը փաստորէն Նոր Հայկական ձայնագրութեան առաջին դասագիրքն է<sup>28</sup>, քանզի ըստ հրատարակողի, գրուել է 1874-ից առաջ, այսինքն՝ մինչեւ Նիկողայոս Թաշճեանի եւ այլոց դասագրքերի տպագրուելը<sup>29</sup>: Զարմանալին այն է, որ Տնտեսեանի վերոնշեալ դասագիրքը ցարդ տարօրինակ կերպով բոլորովին դուրս է մնացել գիտական լոջանառութիւնից: Թերեւս այն լոյս է տեսել շափազանց փոքր տպաքանակով եւ Պոլսից դուրս չի տարածուել<sup>30</sup>, բայցի այդ,

<sup>26</sup> Ձայնագրեալ երգեցողուրթիւնն Արքյ Պատարագի, Վաղարշապատ, 1878:

<sup>27</sup> Եղիս. Մ. Տնտեսեան, Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց, Խսթանպօլ, 1933:

<sup>28</sup> Եղիս. Մ. Տնտեսեան, Տարերք Երաժշտութեան, Խսթանպօլ, 1933:

<sup>29</sup> Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, աշխատասիրեաց Նիկողայոս Ս. Թ.Ա.ՇՃԵԱՆՑ Կ. Պոլսիցի, ի Վաղարշապատ, 1874; նաև՝ Գասպարիք Հայկական ձայնագրութեան, աշխատասիրեց Եջնիկ ՔԱՅԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ, Վաղարշապատ, 1880; նաև՝ Դասագիրք Հայկական-եկեղեցական ձայնագրութեան, աշխատասիրեց դպիր ԱՐՇԱԿ ԲՐՏԱԿ ԲՐՏԵԱՆՑ, Վաղարշապատ, 1890:

<sup>30</sup> Եթէ չհաշուենք Հ. Մինաս Բժշկեանի վերոնշեալ աշխատաիրութիւնը, որն ըստ հութեան ոչ թէ զասագիրք է, այլ ուշ միջնադարեան տրակտատների ոճով շարագրուած էրկ, ուր առկայ են նաև նորասատեղ Հայկական ձայնագրութեան հիմունքները: Ինչ վերաբերում է Տնտեսեանի «տարերք երաժշտութեան» գրքին, ապա տպաքանակը դրա վրայ նշուած չէ եւ հասել է

քանի որ տիտղոսաթերթում բացակայում է դասագիրք բառը, ապա արտաքուստ այն պարզապէս երաժշտութեան մասին տեսական աշխատութեան տպաւորութիւն է թողնում: Հարկաւոր է նշել, որ Եղիա Տնտեսեանը Համբարձում Լիմոնձեանի անմիջական աշակերտներից էր, իսկ իրեն աշակերտել էր չնորհաշատ Յովհաննէս Միւհենախսեանը<sup>31</sup>, որին իրաւամբ պոլսահայ տպագրութեան Գուտենբերգ են համբարձում: Երաժշտական հակումներից բացի, վերջինս օժտուած էր նաև նկարչական ու գծագրական ձիրքերով եւ իր բոլոր ուժերը ներզրեց առաջին անգամ Արդի հայկական ձայնանիշերի կաղապարների պատրաստման գործին, ինչի չնորհիւ հնարաւոր դարձաւ տպագրուել հայոց ձայնագրեալ բոլոր ժողովածուները: Նա ամէն կերպ սատարում էր Ար. Յովհաննիսեանին, որպէսզի վերջինս կարողանայ ամբողջացնել եւ աւարտին հասցնել իրենց ուսուցչի՝ Հ. Լիմոնձեանի ստեղծած ձայնագրութեան համակարգը: Հարկաւոր է նշել, որ Հմտօրէն տիրապետելով արեւելեան թամբուր գործիքին, Լիմոնձեանն իր գիւտն իրագործելիս օգտուել էր այս գործիքի մատնատեղերից եւ դրա օրինակով, հայկականից բացի, նաև արեւելեան ձայնաշարի աստիճանների աւանդական անուններով էր կոչել իր ստեղծած ձայնագրութեան հնչիւնները<sup>32</sup>: Ար. Յովհաննիսեանն էր, որ հետագայում հայեցի կերպով մշակեց գրանք, վերացնելով տարբեր ութնեակներում (օկտավա) առկայ միեւնոյն հնչիւնի արեւելեան իրթին անուանումները, ինչպէս նաև, եւրոպական նօտաների անունների օրինակով, տուեց դրանց երկուական տառով վանկային համառօտ անուններ՝, առաւելագոյնն պարզեցնելով համակարգի բաղադրիչները, դարձնելով ուսուցման եւ կիրառման համար աւելի յարմար: Նոյնը կարելի է ասել նաև ժամանակի (այսինիքն՝ տեւողութեան) նշանների մասին, որոնց մանր չափերը լրացնելով եւ տաճկական անունները վերացնելով, նա վերջնականապէս հայացրեց ու կատարեալ վիճակի հասցրեց Նոր հայկական ձայնագրութիւնը: Հէնց այս խմբագրուած համա-

ինձ Ստամբուլի հայոց պատրիարքարանից, ապա թէ ոչ, գուցէ երբեւէ չի-  
մանայի այդ գրքի գոյութեան մասին:

<sup>31</sup> Ար. ՔՀՆՅ. ՀԻՍԱՐԵՍՆ, Պատմութիւն Հայ ձայնագրութեան, էջ 53-55:

<sup>32</sup> Տե՛ս Հ. Մինա Բժշկական, Երաժշտութիւն..., Մասն Բ. Եղանակագրութիւն. Յաղագ Յշանագրաց (խաղից) ևս աստիճանաց ձայնից, էջ 99-107(ձեռ 7):

<sup>33</sup> Փո, է, Վէ, Բէ, ԽՌ, Նէ, Պա; Այստեղ միայն իկործի համառօտագրումն է մէկ տառով արտայալուած:

կարգի միջոցով էր, որ ձայնագրուեցին հայոց մասնագիտացուած երգեցողութեան հագարաւոր նմոլչները, արձանագրելով եւ ժողովրդին վերադարձնելով իր խակ դարաւոր երաժշտական գանձերը: Այս ձայնագրութիւնները Լիմոննեանի եւ նրա աշակերտների մեծ գործի փառաւոր պատողներն էին, որոնք յաւերժացրին ինչպէս հայ հոգեւոր երաժշտութեան բարձրարուեստ նմոլչները, այնպէս էլ իրենց ստեղծողի անունը: Հէնց այս ձայնանիշերի միջոցով է իր մեծ առաքելութիւնը կատարել հանճարեղ կոմիտաս Վարդապետը՝ յատկապէս արեւմտեան Հայաստանի հեռաւոր գիւղերում, ուր հնգագծով նօտայի թուղթն անհասանելի էր: Տարիներ շարունակ գրի առնելով հայ գեղջուկի երաժըշտական բանահիւտութեան բազմազան նմոլչներն ու կորստից փրկելով թէ հայերի, թէ հարեւան ազգերի հարուստ ֆորկորը, նա իր հանճարի ուժով լրկում էր դրանք, ինչպէս ոսկերիշը՝ անմշակ ագամանդը, չողշողացող այդ գանձերը կրկին յանձնելով իրենց օրինական տիրոջը՝ ժողովրդին:

Ինչպէս վերը նշուեց, Կ. Պոլսում նոյնպէս Լիմոննեանի ձայնագրութեամբ գրառուել են այլ ազգերի բազմաթիւ աւանդական ու հեղինակային ստեղծագործութիւններ, մանաւանդ որ մերձարեւելեան երաժշտական նմոլչները չափազանց երկարաշունչ էին եւ անզիր լիշելու համար յաճախ ամիսների ջանքեր էին պահանջում: Այսպիսով, Նոր հայկական ձայնագրութեան ստեղծումը Կոստանդնուպոլսում ոչ միայն ազգային, այլև միջազգային կարեւոր նշանակութիւն է ունեցել ու ցայծմ էլ չի կորցրել իր տեսական ու գործնական արժէքը:

Համբարձում Լիմոննեանի երաժշտական գործունէութիւնը սակայն չի սահմանափակւում լոկ Արդի Հայկական ձայնագրութեան ստեղծումով: Նա օժտուած է եղել նաեւ երգահանի ձիրքով, ինչը զրեթէ յայտնի չէ հանրութեանը: Լինելով չափազանց համեստ անձնաւորութիւն, նա առանձնապէս հոգ չի տարել գրառելու իր հեղինակած եղանակները: Ար. քահանայ Հիսարիքանը բերում է Լիմոննեանի յօրինած երգերի հետեւեալ ցուցակը՝ «Տիրածին Կոյս», (որ Ա. Աստուածածնայ վրայ ներբող մ'է՝ շարադրեալ Փէշտիմալնէան Գրիգոր պատուելիէ). 24 տողով քերթուած մը՝ որոյ իւրաքանչիւր տողին ուրոյն եղանակներ դնելով յօրինած է անմահ հեղինակը), «Ո՛չ, ի սկզբան պատերազմին» (որ Վարդանանց պատերազմի նկարագրութիւնն է), «Ո՛վ ամենապայծառ»՝ «Համեմատ քեզ ոչ գոյ նման» եւ «Մամր անարատ» մասերով, «Վեհ Հմայեակ» (որը Վարդան Մամիկոննեանի հայրն

էր-Ա.Վ.)՝ «Գործք քաջութեան», «Զարթիր, զարթիր» եւ «Զօրեղ բազուկն Վահանայ» մասերով, «Շուշանագեղ»՝ «Հօտք կառապետք» մասով, «Թշնամին գքեղ վիրաւորեաց»՝ «Աղրիւր առատ» եւ «Մարիամ Սուրբ Կոյս» մասերով, «Ռ'վ տիրապէս»՝ «Գովելի, գովելի» մասով, «Ահա կորնչիմ»՝ «ի տուն գինուոյ» եւ «Հոգին անքակ» մասերով: (Բացի ասոնցմէ՝ ունի նաև 20է աւելի տարրեր եղանակներով յօրինած «Յարեաւ Քրիստոս» Յարութեան Տաղը, որ Յինանց մէջ երգուելու յատկացուցած էր. թէեւ կը սուի թէ ուրիշ Մեղեդիներ եւ Տաղեր ալ հեղինակած է, բայց դժբախտաբար անծանօթ մնացած են մեզ, մինչեւ ցարդ ձեռուբնիս հասած չըլլալուն համար)՝<sup>34</sup>: Հիսարյեանը իր գրքի մի էջում տեղադրել է Յարութեան այս տաղի երկու նմոյշները՝ «Յարեաւ Քրիստոս» սկզբնաբառերով եւ վերնագրուած «Մաքամի չարկեահ» եւ «Մաքամի կէրտանիէ» արեւելեան ձայնեղանակների անուանումներով, որոնք վերը նշուած 20-ից աւելի տարրեր եղանակներից երկուսն են (կարելի է ենթադրել, որ միւս նմոյշներն էլ արեւելեան այլեւայլ ձայնեղանակներում են յօրինուած՝ թերեւս ուսուցողական նպատակով), որոնք հաւանաբար սպատճէնուած են հէնց Լիմոնճեանի աշակերտներից մէկի ձեռքով՝<sup>35</sup>: Զնայած որ այս երգերն ընթանում են արեւելեան վերոնշեալ ձայնեղանակներում, սակայն դրանք հնչում են հիմնականում հայոց հոգեւոր երգեցողութեան ուշ միջնադարեան տաղային արուեստի ծիրում եւ ժամանակին բաւական մեծ ժողովրդականութիւն են վայելել կ. Պոլսում: Խակ վերը նշուած ձեռագրերի մեծ մասը յիտագայում ցաքուցրիւ լինելով, մնացել են լոկ վերնագրերը, որոնցից կարելի է ենթադրել, որ դրանք հիմնականում աշխարհիկ բնոյթի ստեղծագործութիւններ են եղել: Դրանցից եղանակով հանդերձ պահպանուել է միայն առաջինը՝ «Ճիրածին Կոյս» սկզբնատողով՝ նոյնպէս ստեղծուած ուսուցողական նպատակով ու դրա շնորհիւ բազմիցս արտագրուելով:

Սակայն Համբարձում Լիմոնճեանի իսկական գլուխգործոցները Զարչարանաց կամ Աւատ Ուրբաթի երեք հանդիսաւոր շարականներն են՝ վերաեղանակաւորուած Ս. Մահակ Պարթեւի

<sup>34</sup> Ա.Բ. ՔՀՆՅ. ՀԻՍԱՐԼԵԱՆ, Պատմութիւն Հայ ձայնագրութեան..., Գ. Պոլիս, 1914, էջ 17-18:

<sup>35</sup> Անդ, էջ 60: Մըանք շափականց մակր են տապագրուած եւ տեղադրել բոլորովին անընթեռնելի են, այդ պատճառով հնարաւոր չէր տեղադրել ապաեղ եւրոպական նօտաներով դրանց փոխադրութիւնները:

ստեղծած շարականների տեքստերի հիման վրայ. Դրանք եւրոպական նոտագրութեամբ գետեղուած են վենետիկի Միիթարեան միարանութեան անդամ Հ. Ղեւոնդ Տայեանի ձայնագրած բազմահատոր Շարակնոցի Դ հատորում<sup>36</sup>, որոնք Ս. Ղազար են հասել Լիմոնճեանի անմիջական աշակերտներ Հ. Եղ. Հիւրմիւգեանի եւ Հ. Օգ. Գույումեանի միջոցով, որոնցից էլ լսել ու ընդօրինակել է ինքը՝ Հ. Ղեւոնդը՝ Քանի որ Բազմավիշպի նախորդ համարներում տպագրուած յօդուածաշարումս արդէն հանդամանալից կերպով անդրադարձել եմ Հ. Լիմոնճեանի վերոնշեալ ստեղծագործութիւններին, ապա չկրկնուելու համար ամփոփեմ միայն, որ սրանց առկայութիւնը վենետիկի Մայրավանքի սրբազն երգեցողութիւնների ձայնագրութիւններում յաւագոյնս ընորոշում են իրենց հեղինակին նաեւ որպէս տաղանդաւոր երգահանի, որը ոչ միայն Նոր Հայկական ձայնագրութեան զիւտով աղաւաղումից փրկեց հայոց հոգեւոր երաժշտութեան հազարամեայ գանձերը, այլև ժթ. դարում կարողացաւ ստեղծել շարականների այս գեղեցիկ նմոցչները, որոնք իրենց պատուաւոր տեղը դատն Վենետիկի Միիթարեան միարանութեան բազմահատոր Ձայնագրեալ Շարակնոցում:

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ

<sup>36</sup> Տե՛ս Շարական Հայուսանեաց Եկեղեցւոյ. Ձայնագրեաց Հ. Ղեւոնդ Տայեան Միիթարեան, Հ.Դ. Կառն Մեծի Ուրբաթին. էջ 273-283, 284-296 և 311-325.

<sup>37</sup> Այս մասին տե՛ս ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, Աշ միջնադարի հոգեւոր երաժշտութեան Վենետիկի դպրոցն ըստ Հայր Ղեւոնդ Տայեանի Ձայնագրեալ Շարակնոցի, Մաս Ա. Բազմավիշպ, 2005, էջ 379-389, նոյնի Մաս Բ. Բազմավիշպ, 2006, էջ 534-551, որի 544-550 էջերում գետեղուած են Համբարձում Լիմոնճեանի Արծաթսիրութեամբն ԲԶ Օրհնութեան և իջեր յերկնից ԳԶ Հարցի առաջին աները, նաև՝ ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, (Երաժշտարութեան մասին պատկերացումները հայոց մեջ), Բազմավիշպ, 2007, (էջ 493-509), որից յետոյ գետեղուած է Հ. Լիմոնճեանի հեղինակած Եկաբ Հաւասացեալք Մատենի Համբարձի առաջին առանք, էջ 510-516; Վերջինս Հ. Ղեւոնդ Տայեանը լոյս էր ընծայել զեռւս 1933-ին, ինչը վկայում է արգոյ Միիթարեան Վարդապետի առանձնայատուկ վերաբերմունքի մասին:

**Hambartsum Limonjian:**  
**(His Life and Work. 1768-1839 A.D.)**  
**The New system of Armenian Notation**

ARPI VARDUMIAN

(summary)

The Armenian monodic spiritual music was created more than fifteen centuries ago by the inventors of the Armenian alphabet – Mesrop Mashtots and Sahak Parthev, following which the Armenian church music began to be recorded by "khaz"es – the Armenian signs for musical notes. However, during the late Middle Ages the clue to the "khaz"es was lost due to the extremely adverse historicopolitical conditions and the massacres of Armenians in the Ottoman Empire. As a result, the Armenian spiritual professional music had to be handed down by oral tradition up to the beginning of the 19<sup>th</sup> century.

The new Armenian non-linear notation was created in Constantinople, in 1813-1815, by Hambartsum Limonjian, a composer and teacher of music, in cooperation with Minas Bjshkian, a historian and musicologist. The new Armenian system of notation contained in its basis the seven 'khaz'es of mediaeval khaz-signs which, in the new system, correspond to the seven grades of the western musical scale. "The Sharaknots" (The collection of mediaeval church songs), "The Patarag" ("The Mass") and "Jamagir" ("The Book of Hours") were published in the new notation system in 1870's in Echmiadzin.

This new system of notation was universal and very convenient for the use of not only Armenians, but also other peoples in Constantinople. The great Komitas also used this system, especially in cases of shortage of five-line music sheets (for European notation) in remote villages. Thus, the new system of notation enable the preservation of not only centuries-old heritage of Armenian professional music, but also the rich Armenian folk music tradition.